ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հրապ. Կառավարական տուն 3

«13» օգոստոսի 2025թ. N 1920-Ա

ՀՐԱՄԱՆ

«ՇԻՐԱԿ ԱՎԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԵՐԵՎԱՆ-ԱՍՏԱՆԱ-ԵՐԵՎԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓՈԽԱԴՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1010-Ն որոշման հավելվածի 16-րդ կետով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը և հիմք ընդունելով «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի հուլիսի 30-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) նշանակել Երևան-Աստանա-Երևան ուղղությամբ կանոնավոր օդային հաղորդակցություններ իրականացնող փոխադրող:

2. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետին՝ ապահովել հրամանի օրինակի տրամադրումը Ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին ստորագրման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել

սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

8/13/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք. Երևան